ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԳԻՆՆԵՐԸ

Հակոբյան Հ. (ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Հայաստան)
hphakobyan@mail.ru

Բանալի բառեր՝ անտիկ Հայաստան, բագին, տաճար, սրբատեղի, կառույց, գործառույթ:

Հին Հայաստանի հոգևոր ժառանգության առավել ուշագրավ բնագավառներից մեկը հին հայերի պաշտամունքն է և նրան առնչվող հաստատությունների համալիրը: Վաղ միջնադարյան հայ գրավոր աղբյուրները սրանց մասին թողել են սուղ, սակայն կարևոր տեղեկություններ: Այս տվյալների մի մասն ակնարկում են յուրահատուկ սրբազան կառույցների՝ բագինների մասին (Ագաթանգեղոս, Մովսես Խորենացի): Համատեքստից ելնելով՝ ենթադրվում է, որ բագինները կազմել են տաճարների մի մասը կամ էլ եղել են ինքնուրույն կառույցներ՝ տեղայնացած առանձին սրբատեղիներում:

Մինչև այժմ հայագիտության մեջ չկա որևէ կայուն կարծիք բագինների արտաքին կառուցվածքի և դրանց որոշակի գործառույթի վերաբերյալ: Ընդ որում՝ այս երկուսը, կրկին դատելով գրավոր աղբյուրների համատեքստից, սերտորեն առնչվել են իրար: Հայագիտության մեջ միևնույն ժամանակ գոյություն ունի ակադեմիական գիտության կողմից հավասարապես ընդունելի առնվազն հինգ բնորոշում բագինների համար: Սա արդեն մատնանշում է, որ բնորոշումները ընդամենը գիտական վարկածներ են, չամրապնդված նոր փաստերով. իսկ վերջիններիս անհրաժեշտությունը մեծ է՝ լուսաբանելու համար ոչ միայն հայ հին պետականության գաղափարական կողմն ընդհանրապես, այլև հայերի հեթանոսական կրոնը և ծեսը մասնավորապես: Առանձին մի խնդիր է, թե արդյո՞ք հայոց տաճարները և սրանց հարող կառույցները մինչև քրիստոնեության նախաշեմը մնացել են խիստ

ավանդական տեսքով և նման են եղել հինարևելյան հարևանների ստեղծագործություններին, թե՞ ավելի հելլենականացված տեսք են ունեցել:

Այս հարցերի միակ լիարժեք պատասխանը գրավոր աղբյուրների տվյալների բաղդատումն է հարևան ժողովուրդների պաշտամունքային կառույցների և, որ առավել էական է, Հայաստանի հնագիտական նյութի հետ: Մինչև վերջերս նման հնագիտական տվյալներ ի հայտ եկած չեն եղել, որ հայագետներին թողել են տարակուսանքի մեջ, թե հինգ հնարավոր տարբերակներից որն է ավելի մոտ իրականությանը. բագինները արդյո՞ք մեհյաններ են, արձաններ, զոհարաններ, սրբարաններ, թե՞ շինությունների համալիր: Նկատենք, որ այս բնորոշումների մի մասը իրար չի հակասում, այլ կարող է լրացնել, իսկ դրանցից վերջինն առաջարկում է բավական ընդարձակ ու անորոշ ձևակերպում:

Խնդրի լուծման սկիզբը երևում է ՀՀ հյուսիս-արևմուտքում պեղվող Հողմիկի խոշոր տաճարական համալիրի տարածքում, որտեղ վերջին երկու հնագիտական սեզոններին բացվում են յուրօրինակ մոնումենտալ կառույցներ՝ ներառված մի բացօթյա համալիրի մեջ: Հենց սրանք էլ անհրաժեշտ է դիտել որպես վաղուց որոնված բագինները, որոնց հորինվածքն այնքան մշակված և զուսպ է, որ հնարավորություն է ստեղծում ուղեկցող նյութի հետ միասին որոշակի դատողություններ անել այստեղ ժամանակին իրականացվող ծեսերի մասին:

BAGIN SHRINES OF THE ANCIENT ARMENIA

Hakobyan H. (National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of Archaeology and Ethnography, Armenia)